ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՕԳՈՍՏՈՍ 2024

8

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Բովանդակություն

Ողջույնի խոսք

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի այցը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

«Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամների աշխատանքային հանդիպումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության հետ

«Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխություններ և լրացումներ»,«Սոցիալական գործընկերություն, կոլեկտիվ բանակցություններ» թեմաներով սեմինար Կոմունալ-բնակարանային տնտեսության և ծառայությունների ոլորտի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչների համար

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշները (2024 թվականի հունվար-հունիս)

Առաջարկություններ «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ԱՄԿ թիվ 182 կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ հերթական ազգային զեկույցի նախագծի վերաբերյալ

Առաջարկություններ «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» ԱՄԿ թիվ 29 կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ ազգային զեկույցի նախագծի վերաբերյալ

«Դերժավա-Ս» ՓԲԸ-ն պարտվել է մաքրուհուն. արհմիության ուժը. զրույց Էլեն Մանասերյանի հետ

Բարի գալուստ,
«Արհմիութենական անցուդարձ» ամսագիր

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արհմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արհմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը:

Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենազորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի այցը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը 2024թ. օգոստոսի 13-ին ճանաչողական այցով հյուրընկալվել էր «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ում:
Հանդիպումը նախաձեռնել էր «Էլեկտրաարհմիություն» արհեստակցական կազմակերպությունների ՃՀՄ նախագահ Կարինե Ալոյանը: Այցի նպատակն էր ծանոթանալ տեղում գործող արհմիության աշխատանքներին, ինչպես նաև «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի արհմիության անդամներին ներկայացնել ՀԱՄԿ-ի կողմից իրականացվող աշխատանքները: Հանդիպման ընթացքում ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը պատասխանեց աշխատակիցների հարցերին և վստահեցրեց, որ նման հանդիպումները կլինեն շարունակական:
Այցի շրջանակներում ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը հանդիպեց «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանի հետ: Քննարկվեցին ընկերությունում սոցիալական գործընկերության և կոլեկտիվ բանակցությունների իրականացումը, ԱԷԿ-ի շահագործման ընթացքում աշխատանքային հարաբերություններում ծագող խնդիրները, ինչպես նաև դրանց լուծման հնարավորությունները: Երկու ղեկավարներն էլ, կարևորելով հանդիպման անհրաժեշտությունը և քննարկված հարցերի և առաջարկվող լուծումների արդիականությունը, պատրաստականություն հայտնեցին հետագա առավել սերտ համագործակցության:



«Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամների աշխատանքային հանդիպումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության հետ

Տեղի ունեցավ «Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Զբաղվածության ապահովման, աշխատանքային ներուժի զարգացման վարչության ծրագրերի համակարգման բաժնի աշխատակիցների հետ երկրորդ հանդիպումը, որը կազմակերպվել էր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից։

Հանդիպման ընթացքում «Վերածնունդ» արհեստակցական կազմակերպության անդամներին ծանոթացրել են զբաղվածության ապահովման գործող ծրագրերին և մշակել քայլեր ուղղված Արցախի Հանրապետությանից բռնի տեղահանված, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց զբաղվածության կարիքների գնահատմանը։ Քննարկման ընթացքում մասնակիցների կողմից բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ։

Հանդիպմանը ներկա էին Հայաստանի արհմիությունների կոնֆեդրացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչության ծրագրերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետներ Անահիտ Կարապետյանը և Անուշ Հովհաննիսյանը, ՀԱՄԿ-ի Աշխատանքային հարաբերություններում հավասարության հարցերով հանձնաժողովի նախագահ Լիանա Ամիրաղյանը։

«Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխություններ և լրացումներ», «Սոցիալական գործընկերություն, կոլեկտիվ բանակցություններ» թեմաներով սեմինար Կոմունալ-բնակարանային տնտեսության և ծառայությունների ոլորտի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչների համար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի օգոստոսի 24-ից մինչև օգոստոսի 25-ը Ծաղկաձորում կազմակերպել է «Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխություններ և լրացումներ», «Սոցիալական գործընկերություն, կոլեկտիվ բանակցություններ» թեմաներով սեմինար Կոմունալ-բնակարանային տնտեսության և ծառայությունների ոլորտի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչների համար: Բացման խոսքով հանդես եկավ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշները (2024 թվականի հունվար-հունիս)

Հայաստանի Հանրապետության սոցիալ- տնտեսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշները (2024թվականի հունվար- հունիս) [1]

		2024թ. հունվար-հունիս	նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, %
Տնտեսական ակտիվության ցուցանիշը			110.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	*մլն.դրամ*	1 408 107.2	118.2
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը	*մլն.դրամ*	285 824.9	104.0
Շինարարության ծավալը	*մլն.դրամ*	202 015.5	115.7
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	*մլն.դրամ*	1 562 050.8	104.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	*մլն.կվտ.ժամ*	4 542.8	102.2
Արտաքին առևտրաշրջանառությունը այդ թվում արտահանում ներմուծում	*մլն.ԱՄՆ դոլար / մլրդ. դրամ*	18 407.3/ 7 308.2 7 927.6/3 148.4 10 479.7/4 159.8	2.0 անգամ 2.3 անգամ 186.5
Միջին ամսական անվանական աշխատավարձը	*դրամ*	279 023	106.8
Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների 2024թ. հունիսի դրությամբ, ընդամենը	*դրամ*	275 654	
Գյուղատնտ, անտառային տնտ-ն և ձկնորսություն	*դրամ*	190 470	
Հանքագործական արդյունաբ. և բացահանքերի շահագործում	*դրամ*	799 925	
Մշակող արդյունաբերություն	*դրամ*	218 938	
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակար-ում	*դրամ*	283 967	
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավար., վերամշակ.	*դրամ*	197 805	
Շինարարություն	*դրամ*	259 494	
Մեծած. և մանրածախ առևտուր, ավտոմեք. մոտոցիկլ-ների նորոգում	*դրամ*	202 560	
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	*դրամ*	275 915	
Կացության և հանրային սննդի կազմակերպում	*դրամ*	139 420	
Տեղեկատվություն և կապ	*դրամ*	824 100	
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	*դրամ*	683 061	
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	*դրամ*	194 169	
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	*դրամ*	286 491	
Վարչարարական և օժանդակ գործունեություն	*դրամ*	185 549	
Պետական կառավարում և պաշտպանութ, պարտադիր սոց. ապահ.	*դրամ*	362 284	
Կրթություն	*դրամ*	156 656	
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	*դրամ*	241 998	
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	*դրամ*	315 019	
Սպասարկման այլ ծառայություններ	*դրամ*	152 720	
Գործազրկության մակարդակը I եռամսյակի դրությամբ	*տոկոս*	15.5	
Դաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը 2024թ. հունիսի վերջի դրությամբ	*մարդ*	42 213	
Կենսաթոշակառուների թվաքանակը 2024թ. հուլիսի 1-ի դրությամբ	*մարդ*	494 659	
Կենսաթոշակի միջին չափը 2024թ. հուլիսի 1-ի դրությամբ	*դրամ*	49 171.5	
ՀՀ բնակչության թվաքանակը 2024թ. հուլիսի 1-ի դրությամբ	*հազ. մարդ*	3 057.8	
Ծնվածներ 1000 բնակչի հաշվով	*մարդ* *պpromիլ*	15 671 10,4	
Բնական հավելաճ 1000 բնակչի հաշվով	*մարդ* *պpromիլ*	2 460 1,6	
Սպառողական գների ինդեքսը 2024թ.հունվար-հունիսը 2023թ. հունվար-հունիսի նկատմամբ	*տոկոս*	99,4	
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը (II եռամսյակ) հաշվարկված՝ ըստ ՀՀ առողջապահ. նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի սննդամթերքի և էներգետիկայի պարենային զամբյուղի արժեքը ըստ ՀԲ-ի մեթոդաբանությամբ 5184 տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքում փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի պարենային զամբյուղի արժեքը	*դրամ* *դրամ* *դրամ* *դրամ*	77 065.5 41 657.0 61 508.0 33 004.3	

[1] *ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական զեկույցի տվյալներով, www.armstat.am*

[2] *Նախնական*

Առաջարկություններ
«Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ԱՄԿ թիվ 182 կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ հերթական ազգային զեկույցի նախագծի վերաբերյալ

ԱՄԿ թիվ 182 կոնվենցիայի նախաբանի 5-րդ պարբերության համաձայն՝ «ընդունելով, որ երեխայի աշխատանքը մեծամասամբ աղքատության հետևանք է, և որ այս հարցի երկարաժամկետ լուծումը գտնվում է կայուն տնտեսական աճի հիմքում, որը տանում է սոցիալական առաջընթացին, մասնավորապես աղքատության վերացմանը և համընդհանուր կրթվածությանը,»:
ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2022թ. աղքատության մակարդակը կազմել է 24.8%: Աղքատների շրջանում կան նաև աշխատող աղքատներ, ովքեր անգամ աշխատանք ունենալով չեն կարողանում ապահովել իրենց և իրենց ընտանիքի անդամների նվազագույն պահանջմունքները: Հետևաբար, Հայաստանի Հանրապետությունում կան երեխաներ, որոնք գտնվելով սոցիալական ծանր պայմաններում, ստիպված են լինում զբաղվել մուրացկանությամբ, ծաղիկների վաճառքով, ինչպես նաև ելնելով մշակութային առանձնահատկություններից աշխատում են գյուղատնտեսության ոլորտում՝ օգնելով ընտանիքի անդամներին:
Իրավիճակը բարելավելու նպատակով, որոշակի իրավական ակտերում, այդ թվում նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքում իրականացվել են փոփոխություններ և լրացումներ, որոնք սակայն բավարար չեն:
Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության 3-րդ բաժնի 11.10)դ. կետի համաձայն՝ Տեսչական մարմնի լիազորություններից է՝ «մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացումը»: Թեպետ, տեսչական մարմնին, կանոնադրության համաձայն, տրված է վերահսկողություն իրականացնելու լիազորություն, Հայաստանի Հանրապետությունում կան երեխաներ, ովքեր շարունակում են աշխատել իրենց կրթության հաշվին փողոցում, դասաժամերի ընթացքում:

Առաջարկություններ
«Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» ԱՄԿ թիվ 29 կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ ազգային զեկույցի նախագծի վերաբերյալ

1. Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադամի հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ իրականացրել է ուսումնասիրություն «Սննդի առաքիչների աշխատանքային պայմաններ»-ի վերաբերյալ: Ուսումնասիրության համար հարցումներն իրականացվել է APR Group հետազոտական կազմակերպության կողմից: Հարցմանը մասնակցել են սննդի 204 առաքիչներ՝ ազգությամբ հայ՝ 156, հնդիկ՝ 38, ռուս՝ 10 (ըստ տոկոսների՝ հարցվողների 76,5%-ն ազգությամբ եղել են հայ, 20,6%-ը՝ հնդիկ, 2,9%-ը՝ ռուս): Ազգությամբ հայ առաքիչները գտել են իրենց աշխատանքը ընկերների (41,0%), սոցիալական ցանցերի (27,6%), աշխատանքային հայտարարության (17,3%) միջոցով, Երևանում սովորելու ընթացքում (7,7%), էլեկտրոնային հավելվածի (2,6%) և այլ միջոցներով (2,6%): Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի տեղավորման գործակալությանը և աշխատելու նպատակով ժամանած լինելու հարցին՝ ազգությամբ հայ առաքիչների տոկոսը կազմել է յուրաքանչյուրի դեպքում 0,6%: Ազգությամբ հնդիկ առաքիչների 34,1%-ը ժամանել Հայաստանի Հանրապետություն աշխատանքի նպատակով: Ազգությամբ հնդիկ առաքիչների մի մասն իր աշխատանքը գտել է ընկերների (29,3%), սոցիալական ցանցերի միջոցով (19,5%), Երևանում սովորելու ընթացքում (9,8%), աշխատանքային հայտարարության (4,9%) և էլեկտրոնային հավելվածի օգնությամբ (2,4%):
Ազգությամբ ռուս առաքիչների մոտ ևս աշխատանք գտնելու առավել տարածված միջոցները հանդիսացել են ընկերները (33,3%), Երևանում սովորելը (33,3%): Բացի դրանցից, ազգությամբ ռուս առաքիչներն իրենց աշխատանքը գտել են աշխատանքային հայտարարությունների (16,7%) և սոցիալական ցանցերի օգնությամբ (16,7%):Աշխատանքային պայմանագրի առկայության հարցին հարցվողների 60,3%-ը պատասխանել է, որ կնքել է աշխատանքային պայմանագիր, 3,9%-ը կնքել է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր, իսկ 1,0%-ը՝ այլ պայմանագիր, իսկ 19,1%-ն աշխատում է առանց որևէ պայմանագրի ու պայմանավորվածության, 7,4%-ն ունի բանավոր պայմանավորվածություն գործատուի հետ, 3,9%-ն ունի բանավոր պայմանավորվածություն իր կուրատորի հետ: Հարցվողների շրջանում եղել են այնպիսի աշխատողներ, ովքեր նույնիսկ դժվարացել են պատասխանել վերոնշյալ հարցին (4,4 %):
Ուշադրության է արժանի այն փաստը, որ հարցվողների 35,3%-ը նշել է, որ չի հանդիպել գործատուին և տեղյակ չէ, թե ով է գործատուն, 32,4%-ը՝ մշտապես կապի մեջ է գործատուի հետ, 27,5%-ը՝ երբեմն հանդիպում է գործատուի հետ, 2,9%-ը՝ խոսել է հեռախոսով, սակայն չի հանդիպել, 2,0%-ը՝դժվարացել է պատասխանել:
Հարցումներն արձանագրել են, որ հարցվողների 59,3%-ը բնակվում են բազմաբնակարան շենքում, 30,4%-ը՝ առանձնատանը, 2,9%-ը՝ սոցիալական տանը, խնամքի հաստատությունում, 2,5%-ը՝ հյուրանոցում/հյուրատանը: Հարցումների արդյունքում պարզ է դարձել նաև, որ հարցվող առաքիչների շրջանում արձանագրվել են այնպիսի առաքիչներ, ովքեր բնակվում են բնակության համար չնախատեսված հանրային տարածքում (2,5%), կոմունալ ընդհանուր պայմաններով բնակության վայրում (1,0%) և այլ պայմաններում (1,0%):

Հատկանշական է, որ հարցվողների 0,5%-ը նշել է, որ կացարան չունի և անօթևան է: Հարցվողների 14,2%-ը նշել է, որ լսել կամ հանդիպել է մարդկանց, ովքեր Հայաստանում աշխատում են ստիպողաբար՝ վախի կամ սպառնալիքի ազդեցությամբ:
Հարցումները թույլ են տալիս պատկերացում կազմել առաքիչ աշխատողների կյանքի որակի և ֆինանսական միջոցների մասին: Կարելի է եզրակացնել, որ նրանք հանդիսանում են խոցելի խումբ, քանի որ չունեն բավարար իրավական պաշտպանություն:

2. Համաձայն Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետական քարտուղարության կողմից 2024 թվականին հրապարակված «Մարդկանց թրաֆիքինգի մասին» ամենամյա զեկույցի՝ ՀՀ կառավարությունը չի մշտադիտարկել կամ վերահսկել աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեությունը կամ չի արգելել աշխատողների կողմից վճարվող հավաքագրման վճարների գանձումը: ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն իրականացրել է տեսչական ստուգումներ, սակայն իրավասություն չունի ստուգումներ անցկացնել «անօրինական» գործատուների մոտ, ինչպիսիք են փոքր ֆերմերային տնտեսությունները կամ ապօրինի բիզնեսները:
Թրաֆիքինգով զբաղվողները հարկադիր աշխատանքում շահագործելու համար որպես թիրախ ընտրում են պարսիկ և հնդիկ միգրանտներին, ովքեր աշխատանք են փնտրում ոչ ֆորմալ հատվածում, և երեխաներին ստիպում են զբաղվել մուրացկանությամբ կամ փողոցում վաճառել իրեր, օրինակ՝ անձեռոցիկներ: Թրաֆիքինգով զբաղվողներն ավելի ու ավելի են օգտագործում սոցիալական մեդիան զոհեր հավաքագրելու առումով:

3.Հնդկաստանի աշխատանքի տեղավորման գործակալությունները սոցիալական կայքերի միջոցով Հայաստանի Հանրապետությունում խոստանում են լավ վարձատրվող աշխատանք: Այս հարցին է անդրադարձել նաև Deutsche Welle-ն՝ հրապարակելով «Հայաստանում հնդիկ աշխատողները հայտարարում են աշխատանքի տեղավորման գործակալությունների կողմից չարաշահումների մասին» (Indian workers in Armenia claimabuse from job agencies) հոդվածը: Այն տպագրվել է Երևանի «Հետք» առցանց թերթի հետ համատեղ: Հնդկական www.onmanorama.com լրատվական կայքը 2024 թվականի փետրվարի 14-ին հրապարակել է «Միջանցք դեպի Եվրոպա. Մալայալից աշխատանք փնտրողները Հայաստանում դառնում են խաբեության զոհ և հայտնվում են թշվառության մեջ» (A passage to Europe: Malayali job seekers who fall prey to conmen end up in misery in Armenia) :

«Դերժավա-Ս» ՓԲԸ-ն պարտվել է մաքրուհուն. արհմիության ուժը. զրույց Էլեն Մանասերյանի հետ

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը:
https://tinyurl.com/27ymcuy5

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am